Հայտ ներկայացնելու հրավեր
Հայաստանի Հանրապետություն
Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր
Ծրագիր No **P148836**
Մրցույթի համար՝ TIIG-13

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է ֆինանսավորում Համաշխարհային Բանկից Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր իրականացման համար և նախատեսում է գումարի մի մասով իրականացնել **«Գյուղատնտեսական նշանակության մեքենա-սարքավորումների մատակարարում Ակունք, Գեղամասար, Կապան, Մեծավան, Ալավերդի համայնքների համար»** պայմանագիրը: Մրցույթը կընթանա Համաշխարհային Բանկի՝ մասնակցելու իրավասության կանոններով և ընթացակարգերով:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը սույնով հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնել կնքված հայտեր՝

Լոտ 1
1 հատ Տրակտոր 3-րդ քարշակ դասի
2 հատ Տրակտոր 1,4-րդ քարշակ դասի
Լոտ 2
1 հատ Հացահատիկային կոմբայն Ա
1 հատ Հացահատիկային կոմբայն Բ
1 հատ Հացահատիկային կոմբայն Գ
Լոտ 3
1 հատ Գութան մեխանիկական հնգաթև
1 հատ Գութան մեխանիկական եռախոփ
1 հատ Սկավառակավոր կախովի տափան
1 հատ Կուլտիվատոր Ա
1 հատ Կուլտիվատոր Բ
1 հատ Կուլտիվատոր Գ
1 հատ ֆրեզ
Լոտ 4
1 հատ Սրսկիչ
1 հատ Կախովի օդափոխիչային սրսկիչ
Լոտ 5
1 հատ Շարքացան
1 հատ կարտոֆիլատնկիչ
1 հատ կարտոֆիլահանիչ
1 հատ Պարարտանյութի ցրիչ
Լոտ 6
1 հատ Խոտհավաք (փոցխ կախովի)
1 հատ Խոտհավաք
2 հատ խոտհնձիչ մատնասեգմենտային
1 հատ Խոտի մամլիչ-հակավորիչ

Առաքման ժամանակահատվածները կազմում է **45 և 90 օր:**

3. Հայտատուները իրավունք ունեն մասնակցել մեկ կամ ավելի մրցույթներին (լոտեր) ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթում: Հայտատուները իրավասու են առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանագրերին դիմելու դեպքում: Այդ զեղչերը պետք է ընդգրգված լինեն մրցութային հայտում:

4. Մրցույթն անցկացվելու է Ազգային մրցակցային գնման ընթացակարգով Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում Ապրանքների, Աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնում» ուղեցույցի համաձայն («Գնումների ուղեցույց» հունվար, 2011թ., վերանայված Հուլիս 2014 թ.), և հայտ կարող են ներկայացնել բոլոր իրավասու հայտատուները, ինչպես սահմանված է Գնումների ուղեցույցում: Պետք է նաև հաշվի առնել 1.6 և 1.7 կետերը, որոնցով սահմանվում են շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությունը:

5. Հայտերը պետք է ներկայացվեն **միայն** էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով ամենաուշը **2020թ-ի հուլիսի 27-ին, ժամը 12:00-ին:** Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

6. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»: Հայտի ապահովման հայտարարագիր պահանջվում է յուրաքանչյուր լոտի համար: